ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

20 նոյեմբերի 2019 թվականի թիվ 455 – Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2002թ. սեպտեմբերի 19-ի թիվ 1796-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին կետով,

Կարգադրում եմ.

1. ՀՀ Տավուշի մարզի ընդերքօգտագործման իրավիճակի ուսումնասիրության նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ հետևյալ կազմով.

Մերուժան Հարությունյան	–	խմբի ղեկավար, Տավուշի մարզպետի օգնական,
Արկադի Ամիրխանյան	–	Տավուշի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության, բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ,
Աղաբեկ Գալստյան	–	Տավուշի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչությունՀԳՄ ՏՍ համակարգման բաժնի վարիչի ժ/պ,
Դավիթ Մխիթարյան	-	Տավուշի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և ՀԾ հարցերի բաժնի վարիչ,
Վահե Հովհաննիսյան	-	Տավուշի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և ՀԾ հարցերի բաժնի գլխավոր մասնագետ,
Խաչիկ Ամիրաղյան	-	Տավուշի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և ՀԾ հարցերի բաժնի գլխավոր մասնագետ:

2. Աշխատանքային խմբին՝ 10-օրյա ժամկետում ուսումնասիրել և Տավուշի մարզպետին ներկայացնել հաշվետվություն մարզի տարածքում ընդերքօգտագործման իրավիճակի վերաբերյալ՝ նշելով հանքավայրը, տեսակը, սեփականության ձևը, իրավական կարգավիճակը, օգտագործման ծավալները, հնարավորություններն ու խնդիրները:

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ Թ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

21.11.2019

X

20 նոյեմբերի 2019թ
ք. Իջևան